

ՏԵՐ ՊԵՏՐՈՍ Ա.

ԳԵՏԱԴԱՐԶ.

1019—1059 թ.

Սերաստիոյ ս. Նշանի վանքում ս. Աստուածածնի տաճարի մէջ մի հոյակապ մարմարոնեայ շիրմի տակ հանգչում են այսօր Գետադարձ Պետրոս Ա. կաթողիկոսի նշխարները: Այն ժամանակ երբ նորա նախորդների՝ Հայոց բազմաթիւ երանաշնորհ հայրապետների շիրմներն անհետացած և նոյն իսկ նոցա հանգստեան տեղն անգամ անծանօթ մնացած են մեզ համար, Պետրոս Գետադարձի շիրմն ութ հարիւր տարուց աւելի պահուած է, կարծես, յաջորդող սերնդին պատմելու և հրաշանքներ տալու այն դառն և անօրինակ փորձերի համար, որ ունեցաւ ինքն տէր Պետրոս Ա. իւր քառասնամեայ հայրապետութեան ժամանակ: Հայոց հայրապետական աթոռի տարազրութեան անդրանիկ կոթողն է այդ շիրմը: Մինչ ցայն՝ ս. Գրիգորի պատուական յաջորդներից ոչ մէկը պէթէ, չէր հասել հայրենի հողից դուրս ամփոփուած լինելու դժբաղդութեանը: Բացառութիւն են ս. Թովսէփ և Սահակ Գ. Զորափորեցին, որոնցից առաջինը ս. Ղեօնդեանց հետ միասին նահատակուեցաւ 453 թուին Պարսկաստանի Ապար աշխարհում՝ իրրե աննկուն ախոյեան քրիստոնէական եկեղեցու ազատութեան համար, իսկ երկրորդը կնքեց իւր մահկանացուն 708 թուին Միջագետքի յառան քաղաքում, երբ՝ իրրե քաջ հովիւ՝ գնում էր Դամասկոս փրկելու իւր հօտը արաբական ամիրապետի ծանր վրէժինդրութիւնից: Թէև նոքա երկուսն էլ օտար երկնքի տակ մեռան՝ իրենց սիրեցեալ հօտից հեռու, սակայն նոցա մահը մի ամբողջ աշխարհի փրկութեան պատճառ եղաւ. յաւիտեան երախտապարտ սերունդը պաշտում է միշտ ս. Թովսէփի յիշատակն՝ առանց խմանալու թէ ո՞ր է նորա գերեզմանը. իսկ Սահակ Գ. Զորափորեցու համար արդէն վաղուց հռչակել է նորա արժանաւոր յաջորդներից մէկը, թէ «զմեռելութիւն նորա պատուական արար Աստուած քան զմեր կենդա-

նութիւնս»: ¹ Նոյնը չէ կարելի է ասել, աւանդ, տէր Պետրոս Ա. Գետադարձ կաթողիկոսի համար: Նա իրենով սկսեց այն դժբաղդ հայրապետների շարքը, որոնց վիճակուած էր, ինչպէս ս. Ներսէս Շնորհալին է ասում «իրրե զայժմն յորսորդաց և ի շանց փախուցեալք»: ² ապաստարան ընտրել անծանօթ վայրերի անձկութեան մէջ՝ Հայոց հայրապետութեան բնագաւառից շատ հեռու: Իրրե անդրանիկ տարազրեալ հայրապետ՝ ինքն տէր Պետրոս Ա. մեծապէս նպաստեց Հայոց եկեղեցական պատմութեան այդ նոր շրջանի հանդէս դառնն. ինքն իսկ սկանառես եղաւ իւր հայրենիքի աւերմանն և իւր հօտի վարատմանը. իրեն հետ վտարանդի շրջեցաւ եկեղեցական դասը և իրեն հետ միասին տեսան և ողբացին եկեղեցու անշքութիւնն իւր իսկ ժամանակակիցները: Նորա շիրմը Սերաստիայում կապում է մեզ, այսպիսով, այն չարաքաստիկ շրջանի սկզբնաւորութեան հետ, որ տեւեց մօտ չորս հարիւր տարի մինչև որ 1441 թուին վերջացաւ հայրապետական աթոռի փոխադրութեամբ դէպի Ս. Էջմիածին:

Ա.

Թէ ո՞ր և երբ ծնաւ և սնաւ տէր Պետրոս Ա. մեզ յայտնի չէ: Գիտենք, որ նա Անանիա Ա. Մոկացի կաթողիկոսի քեռորդին է և յՄայիկ Ա. Արշարունի կաթողիկոսի եղբայրը: Նոքա երկուսն էլ շատ նշանաւոր տեղ են բռնում Հայոց հայրապետների շարքում: առաջինն յայտնի է իրրե խրոխտաբարոյ և եկեղեցու միութեան և բարեկարգութեան նախանձախնդիր հովիւ, որ և վերականգնեց Աղուանից և Սիւնեաց հետեալ աթոռների կապը. ³ իսկ երկրորդն՝ իրրե քաջ վարդապետ՝ իրրե կանգնող Արգինայի մեծ եկեղեցու, որ շինեց Տրդատ ճարտարապետը և իրրե հիմնադիր այնտեղի փառաւոր զբառան. նոքա երկուսն էլ թաղուեցան Արգինայում, որն հայրապետական աթոռատեղի էր ընտրել 943 թուին տէր Անանիա Ա. կաթողիկոսը: ⁴ Կա-

1. Թովս. կաթ. եր. 35.

2. Ն. Շնորհ Ընդհանրական:

3. Ասողիկ Գ. 7, Ստ. Օրպ. ԺԱ.

4. Ասողիկ Գ. 9. 20:

րելի է մտածել, որ տէր Պետրոս ուսաւ և զարգացաւ Արգինայի կաթողիկոսարանում իւր եղբօր հսկողութեան ներքոյ: Ուսմամբ ծոխացած, այն ժամանակի զխութեան ծաշակն առած և իւր գիտնական հմտութիւններով հեղինակութիւն վաստակած անձն է տէր Պետրոս, ինչպէս ծանօթանում ենք նորա մտերիմ բարեկամի Պահլաունի իշխան Գրիգոր Մաղիստրոսի թղթերից. ուղարկելով Ս. Եփրեմի գրքերից մէկը, Գրիգոր Մաղիստրոս գրում է տէր Պետրոսին. «Թողից, աւսում է, զայսօսիկ նախադրութիւն մակագրել մեծագունիդ զլիսոյ, որ ամենայնի ես քաւական եւ զանսպառն հեղուս գիտութիւն եւ շնորհ» անուանում է նորան «գերակատարդ իմաստից». նորա դաստիարակութեանն է յանձնում իւր աշակերտներին, չի քաշուում նորան «ակն տունջեան» անուանելու և իրեն վափուցեալ ի ճառագայթից և խրթնի և խաւարչտին եղեալ. նորա միջնարանն նամակներից մէկն անուանում է «պուետական առասուլթիւն». թղթակցում է նորա հետ զխութեան և արուեստի ամեն տեսակ խնդիրների մասին, շատ անգամ նորանից ուսանել ցանկանալով և միշտ իւր տեսութիւնները նորան հաղորդելով, որոնցից երևում է, որ ինչպէս Գրիգոր Մաղիստրոս նմանապէս նորա թղթակիցը տէր Պետրոս քաջ ծանօթ են ոչ միայն Հայոց, այլև յոյն, ասորի, արաբական հին և նոր գրականութեանն, աւանդութիւններին և ուսմունքներին:

1019 թուին տէր Սարգիս Ա. Սեանեցին ծերունի Գագիկ Ա. արքայի հաւանութեամբ տէր Պետրոսին իւր ձեռքով կաթողիկոս օծեց Անույ մէջ: Այնուհետեւ երկար չքաշեց և մէկը միւսի յետեւից իրենց աչքերը փակեցին թէ Գագիկ Ա. արքայն և թէ Սարգիս Ա. կաթողիկոսը, որն իրեն ընտրել տուող և իրեն հաստատող Գագիկ Ա. արքայի մահն 1020 թուին ողբալուց յետոյ՝ ինքն էլ կնքեց իւր մահկանացուն 1021 թուին և ամփոփուեցաւ Հոռոմոսի վանքում, իրեն միահեծան յաջորդ թողնելով տէր Պետրոսին:

Իւր հայրապետութեան առաջին օրերն իսկ տէր Պետրոսին վիճակուեցաւ մասնակցելու քաղաքական գործերի մէջ և հետզհետեւ յիսերիմ թշնամիներ վաստակելու նոյն իսկ իւր բարեկամների միջից և այս այն պատճառով որ ինքն տէր Պետրոս Ա. հէնց սկզբից անկարող եղաւ ըմբռնելու իւր գիրքի բարձրութիւնն և զերծ մնալու այն կատաղի մրցման փնտախար ազդեցութիւնից, որ կար իւր ժամանակի հայ իշխանների և բիւզանդական դրան մէջ: Իւր կրթութեամբ և հայացքներով բիւզանդական ճաշակի տէր լինելով, Պետրոս Ա. շուտով յայտնի եղաւ իբրեւ բիւզանդական կուսակցութեան պարագլուխ: Հանգամանքներն էլ մեծապէս նպաստեցին Բիւզանդիոյ յաջողութեանը: Արաբական պետութիւնը մօտեցել էր իւր անկմանը. Սելճուքեան թուրքերն արդէն զինու զօրութեամբ տարածուել տիրել էին Միջագետքին և մտել էին Հայաստան. Հայոց երկրի իշխաններն իրենց հարեան այլ թագաւորների և իշխանների հետ միասին, կարելի է ասել, գլուխները կորուցել էին և, չկարողանալով միարանուել, բաժան բաժան էին եղել. ոմանք նեղ դրութիւնից դուրս գալու համար գիմեցին Բիւզանդիոյ օգնութեանն և, իրական օգուտ չգտնելով, իրենց երկրներն յանձնեցին Բիւզանդիոյ կայսերն, և փոխարէնը նորանից ուրիշ երկրներ ընդունելով արեւմուտքում բազմաթիւ ժողովրդով զաղթեցին իրենց հայրենիքից: Այդպէս արաւ Արծրունեաց Սենեքերիմ թագաւորը,¹ որ 1016 թուին Վասպուրականի լայնածաւալ ամուր և արգաւանդ երկիրը փոխեց Սեբաստիոյ հետ և չորս հարիւր հազար հայ զաղթականներով բնակութիւն հաստատեց այնտեղ: Նոյն տարիներում այն է 1021 թուին Բիւզանդիոյ կայսրը Վասիլ Բ. ծանր զօրքով եկել էր Ափխազաց Գեորգի թագաւորի վերայ. երկու իշխանների ընդհարման ժամանակ ոտքի տակ էին ընկել Բարձր Հայքի, Տայոց և Այրարատի մի քանի գաւառները. կայսրը ձմերելու համար իջել էր Դաղստեաց երկիրն և այնտեղ կանգ առել: Այդ բազմաշփոթ իրողութիւնների հետ միասին խռովութիւնը պակաս չէր

1. Վարդան պատմ. 95. Արիստ. Լաստ. Բ. Սմբատ պատմ. 29.

1. Վարդան, եր 92. Սմբատ սպար. 27 եւն.

և Բագրատունեաց տէրութեան մէջ. Գագիկ արքայի մահից յետոյ զահի ժառանգութեան պատճառով զժառութիւն էր ընկել նորա երկու որդեաց, Թովհաննէս Սմբատի և Աշոտի մէջ: Այսպիսով՝ Սեւծուքների երկիւղն հարաւից, Վասիլ Բ. կայսեր վերահաս արշաւանքն արեւմուտքից և ընտանեկան երկպառակութիւնը ներսից այնպէս էին ծանրացուցել երկրի վիճակը, որ հարկ եղաւ տէր Պետրոսին միջամտել և հաշտութեան ու խաղաղութեան միջնորդ լինել ամէն տեղ:

Բ.

Առաջին անգամ տէր Պետրոս միացաւ հայ իշխանների հետ և խաղաղութեան դաշն հաստատեց երկու արքայորդների մէջ: Գագիկ Ա. արքայի կրտսեր որդին Աշոտ, որ կտրիճ էր և խիզախ, զժգոհ լինելով իրեն վիճակուած ժառանգութեան բաժնից, ուրիշների օգնութեամբ զօրք ժողոված՝ եկել պաշարել էր Անի քաղաքը. նորա աւագ եղբայրը Թովհաննէս Սմբատ անկարող եղաւ պաշտպանելու մայրաքաղաքն և իւր եղբօրը սանձելու. կոտորածների առաջն առնելու համար մէջ մտան կաթողիկոսն և իշխաններից ոմանք. խաղաղութիւնն հաստատուեցաւ հետեւեալ պայմանով. Թովհաննէս Սմբատ թագաւորելու էր Անի քաղաքում: նորա մահից յետոյ Անուոյ թագաւորութիւնն անցնելու էր Աշոտին, որ մինչ ցայն ճանաչուելու էր իրրեւ թագաւոր «Դրուց աշխարհին» այն է Անուոյ շրջակայ միւս երկրների: Թովհաննէս Սմբատ հայրենի զահի վերայ այսպիսով հաստատուելուց յետոյ՝ դեռ ապահով չէր ոչ իւր եղբօր կողմից, որ միշտ հետամուտ էր Անի քաղաքին օր յառաջ տէր դառնալու, և ոչ էլ այլեայլ շրջակայ թշնամիների կողմից, որոնց մէջ աւամենից վտանգաւորն էր Վասիլ Բ. կայսրը: Այս պատճառով նա պատգամաւոր ուղարկեց կայսեր մօտ տէր Պետրոսին այն ժամանակ, երբ նա տակաւին Խաղտեաց երկրումն էր: 1022 թուին տէր Պետրոս Ա. մեծ շքով ներկայացաւ Վասիլ Բ. կայսերն. ինչպէս մի աւանդութիւն ասում է,՝ կաթող-

ղիկոսն հանդիպեցաւ կայսրը Տրապիզոնում: նորա հետ էին տասներկու եպիսկոպոս, եօթանասուն արեղայ քահանաներ և երկու վարդապետ՝ այն է՝ Երզմիմաստն Թովսէփ Հրնծուց վանից և քաջն և անյաղթն Թովհաննէս Կողեռն: Վեհի հետ էին նմանապէս զինուորական դասից և աւագանիներից երեք հարիւր հոգի. իրեն հետ առել էր թագաւորական տանից ոսկու և արծաթի դանձեր, ձիեր և ջորիներ: Կայսրը տեսնելով տէր Պետրոսին, շատ ուրախացաւ. նորա առաքինութեան համբաւն յառաջուց հասել էր թագաւորին. սքանչելի մարդ էր կաթողիկոսը՝ Վի ամենայն բարի մասամբ և «ունէր շնորհ իմն աստուածական» բժշկելու արտաժէտներին և հալածելու դեերին, ասում է նոյն աւանդութիւնը: Այդ շքեղ հանդիպման ժամանակ և հաստատուեցաւ դաշն Վասիլ Բ. կայսեր և Թովհաննէս Սմբատ թագաւորի մէջ սորա ներկայացուցչի տէր Պետրոսի միջոցով: Այս դաշնակցութեան մասին է, որ ասում է ժամանակակից պատմիչը, թէ «անդ եղել Հայոց կորստեան գիր եւ նամակ» և բացատրում է թէ թագաւորը պատուիրել էր կաթողիկոսին գրել և տալ կայսրը կտակ, որ իւր վախճանից յետոյ Անուոյ և նորա շրջակայ երկրների ժառանգութեան իրաւունքը տալիս է կայսրը: Մի այլ պատմիչ ասում է, որ Թովհաննէս Սմբատ այսպէս վարուեցաւ այն նպատակով, որպէս զի կայսրը նորան պաշտպանէ իւր թըշնամիներից. «պատրիարքին պատուիրէ, ասում է, տալ ձեռագրով զԱնի զկնի մահուան իւրոյ ի Հռոմս, եթէ պահէ զնա ի նեղչաց իւրոց»:²

Միւսնոյն 1022 թուականի յունուարի 6-ին տէր Պետրոս կատարեց Վասիլ կայսեր առաջ Զրօրհնէքի հանդէսը, որ իւր փառաւորութեամբ այնպիսի մեծ ապաւորութիւն է թողել ականատեսների վերայ, որ նորանոր հրաշալի աւանդութիւնների նիւթ է դառել: Եթէ և ժամանակակից Լաստիվերտցին³ շատ չտրաւոր է խօսում այդ հանդիսակատարութեան վերայ, սակայն ուրիշ յիշատակարան-

1. Արքիտ. Լաստ. Բ.:

2. Վարդան:

3. Արքիտ. Լաստ. Բ.:

ներ¹ բաւական մանրամասն պատկերացնում են այն մեծ ազդեցութիւնը: Այդ ժամանակին է վերաբերում նորա Գետադարձ մականունն և ս. Նշանի գետարգել կոչումը: Արիստակէս ասում է թէ «ի հեղուկ հայրապետին զտէրունական իւղն ի ջուրսն» ցնցուզս լուսոյ ծառագայթից յանկարծակի ծագեաց ի ջուրցն» այս խօսքերից երևում է, որ Հաստիվերացին տէր Պետրոսի Գետադարձ անունն մասին ոչինչ չգիտէ. հետեւաբար այդ անունը հայրապետի ժամանակակիցներին յայտնի չէ: Այլ կերպ է պատմում միւս յիշատակարանը, որ ինչպէս երևում է, յետագայ դարերի դործ է. այնտեղ այդ հրաշալի երեւոյթն աւելի ընդարձակ է նկարագրուած. «այն օրերն» ասում է վրաց հասաւ Բրիտտոսի ծննդեան և աստուածայայտնութեան տօնը. կայսրը իւր զօրքերով և քահանաներով ելաւ ջուրն օրհնելու. կաթուղիկոսին էլ իւրայիններով միասին հրաւիրեց գետի եզրը և հրամայեց, որ նախ տէր Պետրոս օրհնէ ջուրն և ապա յոյները. և երբ որ օրհնեց տէր Պետրոս և թափեց մեռոնը ջրի մէջ, և երեք անգամ սուրբ խաչը ջրի մէջ դրեց, խաչից մի սաստիկ բոցադոյն ծիրանածաւալ լոյս փայլատակեց և ծիածանի նման գետի վերայ խորան կազմեց, և իբրեւ մի «սրահատաճար Առտուծոյ» բոլորին իրեն մէջ ընդունեց. բոլորի երեսներն առհասարակ պայծառացան ինչպէս կարմիր վարդ, և լոյսն այնպէս էր արձակուում խաչից ինչպէս յորդահոս ջուրն աղբիւրներից. կաթուղիկոսի ձեռքն սուրբ խաչն երևում էր ինչպէս բոց. նորանից զոյնզոյն լոյսեր էին արձակուում խաչաձեւ և այն խաչի չափով, և դրնում էին ջրերի վերայ իբրեւ թռչուն, իրարուց բաժան բաժան սլանալով, և անոյշ հոտով լրցուում էին ամէնքը: Այնտեղ ժողովուած բազմութիւնն ահաբեկուած՝ Տէր ողորմեա էին ասում. երբ որ աղօթում էին, լոյսը միազունդ եղաւ և երեք անգամ դիպաւ ջրին և ապա ամբողջութեամբ խաչի ծոցում. և գետի ջուրը յետ դառաւ և մի կողմով կանգ առաւ փոքր ինչ. այն ժամանակ ամբողջ վախեցած՝ երեսի վերայ ընկաւ զողալով. կաթուղիկոսն

երեք անգամ սուրբ խաչով կնքեց գետը և աղօթեց, որ գետի ջուրն հոսէ իւր յառաջուայ ընթացքով. այդ միջոցին գետը դարձեալ հոսեց. վասիլ կայսրը և բոլոր նորա զօրքն ընկան կաթուղիկոսի ոտները, և «մեծագոյ հառաչանօք» համբուրում էին սուրբ Նշանը, և օրհնեալ ջուր էին առնում իրենց գլխին. թագաւորն իւր թագը գետին դրեց, և հրամայեց տէր Պետրոսին ափով օրհնեալ ջուր անելու իւր գլխին, և առաւ գետադէլ սուրբ Նշանն իւր ձեռքը, և անյագ համբուրում էր, և նորանով կնքում էր իւր զգայարանները. նոյնպէս և մետրապօլիտն և բոլոր ժողովուրդը «եռափափազ համբուրել» գրկում էին սուրբ Նշանը և կաթուղիկոսի աջը. և համբուրելու ժամանակ շատերին առողջութիւն էր լինում: Եւ մինչև օրուայ տարածամեկը չվերջացաւ ժողովրդի համբուրելը ամբոխի բաղմութեան պատճառով: Այսպիսի փառաց պսակ հիւսուեցաւ ահա տէր Պետրոսի ծակատին այն ժամանակ, երբ նորա ձեռքով նոր էր կատարուել դժբաղդ Աւույ առաջին սակարկութիւնն և վաճառումը, որ և շատ եղերական վաղձան ունեցաւ ոչ միայն տէր Պետրոսի, այլ նաեւ ամբողջ աղղի և աշխարհի համար:

Գ.

Եովհաննէս Մմբատի վիճակն երկու կողմից ապահովելու այսպիսի մի զօրաւոր միջնորդ հանդիսանալով տէր Պետրոս Ա. մեծ հեղինակութիւն ձեռք բերեց քաղաքական շրջաններում: Ամենից աւելի երախտիք ունեցաւ նա, անշուշտ, նոյն ինքն Եովհաննէս արքայի վերայ. բայց շատ չանցաւ, որ նորա և արքայի մէջ դժտութիւն ընկաւ, որը վերջ ի վերջոյ շատ սուր կերպարանք առաւ: Գժտութեան բուն պատճառները մեզ յայտնի չեն. յիշուում է¹ այն, որ տէր Պետրոս երկար ժամանակ բացակայ է եղել աթոռից. ինչպէս երևում է, յետդառնաց երկրից կաթուղիկոսն անմիջապէս գնացել է Սեբաստիա Սենեքերիմ թագաւորի

1. Մմբատ Սպարապետ 29. Աղբ. Յուշ. հայր. Ա. 109. Н. Марр, Сказание о катол. Петре и т. д. 20.

1. Չամչեան, Պատմ. Հատ. Բ. Եր. 912. ցաւակն է, որ Հ. Չամչեան որոշ չէ յիշել իւր այս տեղեկութիւնների աղբիւրը:

մօտ, ուր և մնացել է մի քանի տարի. այն-
տեղից վերադարձաւ նա Անի 1029 թուին,
երբ լսեց Կարսի Աբաս թագաւորի մահը: Ժողովուրդը քահանաներն և Յովհաննէս Սլմբատ
ծուռ աչքով էին նայում կաթողիկոսի
երկար բացակայութեան վերայ: Այդ է համար-
ւում և նոցա զժկամակութեան առիթը: Քա-
նի որ ժամանակակից Հաստիվերացին և նորա-
նից յետոյ Մատթէոս Ուռհայեցին և Սամուէլ
Անեցին, որոնք տէր Պետրոսի կաթողիկոսու-
թեան ժամանակը մանրամասն են նկարագրել,
այս հանգամանքը չեն յիշում: Դժուար է այդ
և համարել միակ պատճառ զժառութեան կա-
թողիկոսի և թագաւորի մէջ: Պատմութիւ-
նը թանձր քօղի տակ է ծածկել տէր Պե-
տրոսի կեանքի այն ժամանակի նկարագրութիւ-
նը, որ վերաբերում է նորա տեսակցութեա-
նը Վասիլ Բ. կայսեր հետ և ապա Արծրու-
նեաց Սենեքերիմ արքայի մօտ Սեբաստիա
բնակելուն և վերադարձին դէպի իւր աթոռը:
Կան սակայն այլ հանգամանքներ, որոնք բա-
ւական լուսաւորում են տէր Պետրոսի գոր-
ծունէութեան այլ կողմերը և տեղիք են տա-
լիս մտածելու, որ կաթողիկոսի և թագա-
ւորի մէջ ծագած զժառութեան պատճառը մի-
այն նորա երկար բացակայութիւնը էր:

Տէր Պետրոս, քաղաքական գործերի մէջ
մտնելով և հազդեցութիւն ձեռք բերելով, ինքն
իրեն զրել էր այնպիսի պայմանների մէջ, որ
նորա ներկայութեամբ կատարելապէս նսեմա-
նում էր թագաւորի և իշխանների շուքը:
Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսի եղբայրը
լինելով, նա ինչպէս երևում է, ունեցել է
հայրենական հարստութիւն Արշարունեաց գա-
ւառում. Միսիթար Այրիվանեցին յիշում
է,¹ որ նա շինեաց զՍուրմառի և զԹառաքար,
իսկ Մատթէոս Ուռհայեցին² ասում է, որ
«յորժամ էր տէր Պետրոս յաթոռ հայ-
րապետութեան ի Հայաստան աշխարհին, ու-
նէր կազմութիւն հայրենեաց տուեալ ի թա-
գաւորացն Հայոց հինգ հարիւր գեղ անուանի
և մեծանիք և շահաւէտ ընտիր ընտիր»:³ Եթէ
նոյն իսկ այս բազմութիւն գիւղերի մի մասն հա-

մարելու լինինք իրրե հայրենական կալուած
(հայրենեաց), դարձեալ ակներե կը լինի, որ
տէր Պետրոս ունեցել է ժառանգական մեծ
հարստութիւն, որի մէջ յիշուում է Սուր-
մառի բերդաւանի նման նշանաւոր կալուած-
քը: Միեւնոյն ժամանակ Արիստակէս Հաստի-
վերացին¹ պարզ ասում է տէր Պետրոսի հա-
մար թէ «յոյժ սիրող էր զանճուց, որ եւ
քաղուք վասն այնր եպերէին զնա»:² նորա
զանճերի և հաստատութեան տէր լինելն
յայտնի է և այն հանգամանքից, որ տէր
Պետրոսի մահից յետոյ բիւզանդական արքու-
նիքը շատ նեղեց և տանջեց նորա յաջորդին
և քեռորդուն՝ տէր Խաչիկ Բ. կաթողիկո-
սին³ և ուրիշ շատերին, պահանջելով նոցա-
նից հանդուցեալ կաթողիկոսի զանճերը: Այս-
պէս ուրեմն՝ տոհմական կալուածների ժա-
ռանգութեան տէր լինելով, զանճեր զանճե-
լով և հարստութեան յետեւից ընկնելով, տէր
Պետրոս Ա. ոչ միայն իւր խոնարհ առաքե-
լական կոչման ճանապարհից շեղուած էր ե-
րևում իւր ժամանակակիցների աչքում, այլ
և աշխարհային մեծութեան, արքայաւայել
իշխանական կեանքի շրջանը մտնելու ասում
ներով զրգռում, էր կասկած և տհաճութիւն
թագաւորի և իշխանների մէջ: Ծոխ և փար-
թամ էր նաև տէր Պետրոսի կաթողիկոսա-
րանը, աւանդական տասներկու եպիսկոպոս-
ներից⁵ զատ, որոնք միշտ եղել են հայրապե-
տանոցում իրրե աթոռակից, գործակից և
խորհրդակից հայրապետի, Գետադարձ կա-
թողիկոսի վեհարանում մշտապէս կային չորս
վարդապետ, վաթսուն կրօնաւոր և հինգ հա-
րիւր աշխարհական երէց. «էր նուաստ աթոռ
հայրապետութեան քան զթագաւորութեանն
Հայոց» ասում է պատմիչը,⁴ Կաթողիկոսի
ձեռքի տակ կային հինգ հարիւր եպիսկոպոս
իրրե գաւառատեսուչ հինգ հարիւր թեմի
վերայ: Արդեօք իրենց կոչման վսեմութիւնը
ճանաչող գործունեայ և անձնուէր մի բազ-
մութիւն էին հայրապետանոցի այս հարիւ-
րաւոր անդամները, թէ անձնաշահ ապի-

1. Միս. Այր. ժամ. 38:

2. Մատթ. Ուռհ. 484:

1. Արիստ. Հաստ. ԺԴ.

2. Մատթ. Ուռհ. 464:

3. Փաւստ. Բիւզ. Զ. 5:


4. Մատթ. Ուռհ. 484

կար պաշտօնեաներ, պատմիչը չի յիշում: Ընդհանուր վիճակի նկարագրութիւնից բաւական դիւրին է սակայն մակարեւելի, որ բաղումք էին կոչեցեալքն և սակաւք էին ընտրեալք: Բազմամարդ և մեծափարթամ Անոյ հայրապետանոցի բարոյական վիճակի մասին այսպիսի մի եզրակացութիւն անելու տեղիք է տալիս ժամանակի իմաստուն վարդապետներից մէկի Եովհաննէս Կոզեռնի տուած բացատրութիւնը 1036 թուին տեղի ունեցած արևի խաւարման մասին: Աւանդութիւնն¹ ասում է, որ բնութեան այդ ահաւոր երևոյթը մեծ սարսափ ազդեց ամենքին. օրով ցերեկով լուսաւոր երկինքը մթնեց, բոլոր աստղերը տեսանելի եղան ինչպէս գիշեր ժամանակ. այդ խաւարման հետ միասին եղաւ և շարժ. «և գոչեաց առհասարակ ամենայն արարածք, և հնչեցին ամենայն լերինք և բլուրք, և դողաց սասանելով լերինք և ամենայն ապառաժք»: ահն ու երկիւղը պաշարեց ամենքին: Այն ժամանակ տէր Պետրոս Ա. և Եովհաննէս Սմբատ ուղարկեցին Եովհաննէս Կոզեռն վարդապետի մօտ Գրիգոր Մագիստրոս, Վեստ Սարգսին և այլ իշխանների և մի քանի քահանաներ, որպէս զի այդ ահաւոր նշանի բացատրութիւնն իմանան նորանից: Ծոքա եկան և տեսան, որ Եովհաննէս Կոզեռն երեսի վերայ ընկած՝ լաց է լինում և անմխիթար սգում է խորին տրտմութեան մէջ: Պատգամաւորներն ստիպուած էին երկար սպասել և իրենք ևս սկսեցին լալ և ողբալ. նոցա այդ սուգը նկատելով, ս. վարդապետն սկսեց խօսել, լալով և հառաչելով, և ողբալ բոլոր քրիստոնեաների, քահանայական դասի և ս. Եկեղեցու վերայ, և մեկնել այդ ահաւոր նշանը: Այսուհետեւ ասում է, բոլոր քրիստոնեաները պիտի խաւարի մէջ մնան, եկեղեցու կարգերը պիտի խանգարուին, աստուածապաշտութիւնը պիտի թուլանայ, ամեն ոք պիտի արհամարհէ վարդապետների խօսքը, և բանի տեղ չդնէ սուրբ հայրապետների կանոնական հրամանը. այսուհետեւ շատ հերձուածներ պիտի լինին հայրապետների

ծուլութեան պատճառով, որովհետեւ պիտի տկարանան և հաւատոյ քննութիւն չանեն, արծաթի համար հաւատը մէկգի պիտի թողնեն. այսուհետեւ առաջնորդների հակառակութեան պատճառով սուրբ եկեղեցու դռները փակուելու են, արծաթսիրութեան պատճառով շատ անարժանների պիտի տան ձեռնադրութիւն, և ամեն պղծուածի պիտի քահանայ ձեռնադրեն. սրբերին և առաքինիներին վիրաւորում են, անարատներին զրկում են քահանայութիւնից, և արծաթ չունենալու պատճառով նոցա չեն տալիս ձեռնադրութիւն:

Եովհաննէս Կոզեռնի այս ահաւոր խօսքերն արևի խաւարման և շարժի ահաւոր նշանից աւելի սարսափ ազդեցին ամենքին, մանաւանդ այն պատճառով, որ նոյն ազդարարութիւններն եղել էին նոյն վարդապետի բերանով նաև 1023 թուին, այն է տէր Պետրոսի կաթուղիկոսութեան առաջին տարիներն, և ուշադրութիւն դարձնող չէր եղել Արդար մարդն այժմ բաց աչքով տեսնում է չարիքը, համարձակ բողոքում է կաթուղիկոսի և թագաւորի պերճափայլ պատգամաւորների առաջ և ազգու կերպով ուղղութեան հրաւիրում նոցա: Ս. վարդապետի բացատրութեան մասին մնացած այս աւանդութեան մէջ գեղեցիկ պատկերացած է ժամանակի բարոյական վիճակը: Կարելի է ասել, թէ բարոյապէս շատ տխուր և անմխիթար վիճակ է եղել այդ, թէև նիւթապէս խիստ բարգաւաճեալ և փարթամ: Եովհաննէս Կոզեռնի մեղադրանքը եկեղեցական դասի, մանաւանդ առաջնորդների դէմ է. ոչ տէր Պետրոսի բազմամարդ հայրապետանոցը և ոչ էլ նորա տեսչութեան տակ գտնուած ընդարձակածաւալ թեմերի հարիւրաւոր տեսուչները չէին համապատասխան իրենց կոչմանն այն պատճառով, որ ինքը կաթուղիկոսը չէր ծանաչում իւր ուղիղ պարտականութիւնները. այդ իսկ ունի աչքի առաջ Եովհաննէս Կոզեռն, որ իւր բողոքի մէջ կարգերի եղծման և կրօնի խանգարման պատճառ համարում է յատկապէս հայրապետների ծուլութիւնն և արարածութիւնը: Հասկանալի է, ուրեմն, թէ հետզհետեւ պակասում էր տէր Պետ-

1. Մատթ. Ուռ. 73. Մարք. Տեռ. Կոզերն 22. Սմբատ Սպար. 3



բոսի վարկը թագաւորի և նախարարների աշ-
քումն որոնք, անշուշտ, չէին կարող չտեսնել
որ կաթուղիկոսն իւր բազմամարդ հայրապե-
տանոցով իրենց գործով չեն պարապում և
նորանոր չարիքների պատճառ են լինում յՍու-
լ և անձայն տրտունջը հետզհետէ զօրանալով
ի վերջոյ, բարձրաձայն լսելի եղաւ «քաջ և
անյաղթ» վարդապետի բերանով, որ բնու-
թեան ահաւոր նշանների երևալն համարեց
աստուածային պատիժ Հայոց առաջնորդ-
ների թիւր ուղղութեան համար: Առանց
ազդեցութեան չմնաց այդ խիստ բողոքը՝ 1037
թուին տէր Պետրոս «ծածկաքար» հեռացաւ
իւր աթոռից և զնաց Վասպուրականի Չորոյ
վանքը¹ (Մալխապատի վանք), ուր և մնաց
նա չորս տարի:²

Դ.

Թէ ինչո՞ւ տէր Պետրոս Ա. պէտք հա-
մարեց յատկապէս Վասպուրականի Չորոյ
վանքն ապաստանել և այն էլ ծածկաքար,
յայտնի չէ: Գիտենք, որ այդ ժամանակ Վաս-
պուրականն ամբողջապէս անցել էր Բիւզան-
դիոյ իշխանութեան տակ և այն տեղի կառա-
վարութիւնը բիւզանդական էր: Այդ հան-
գամանքը չէր կարող լաւ տպաւորութիւն
թողնել ոչ Հայոց թագաւորի, ոչ իշխանների
և ոչ էլ նոյն իսկ եկեղեցական դասի վերայ:
Այդ ևս առաւել լաւ նշանակութիւն չպիտի
ունենար նաեւ կաթուղիկոսի համար այն պատ-
ճառով, որ այդպիսի մի երևոյթ տեղի ունե-
ցած էր և մի ուրիշ անգամ և պատճառ էր
եղել ծանր դայթակղութեան ամբողջ երկրի
մէջ: Պետրոս Ա. կաթուղիկոսին իրեն և իւր
ժամանակակիցներին շատ լաւ յայտնի էին,
թէ ի՞նչ անցքեր էին անցել զրէթէ մի դար
յառաջ Վահան Ա., կաթուղիկոսի պատճա-
ռով նոյն իսկ Անույ մէջ Աշոտ Շահնշահի
ժամանակ: Վահան Ա. որ կաթուղիկոս ըն-
տրրուեցաւ Անանիա Ա. Մոկացուց յետոյ
965 թուին, կամեցաւ քաղկեդոնիկների հետ
սէր և միաբանութիւն հաստատել. «սկսաւ

պատկերս բերել ի Վրաց և զնել ի վերայ սե-
ղանոյն. և հրամայէր յամենայն եկեղեցիս
զնոյն առնել ըստ Հռոմոց սահմանին և զսե-
ղանն կօնիւք (պատկերներով) զարդարել և
առանց կօնի ոչ մատուցանել պատարագ»: Նո-
րա այդ արարքները տեղիք տուին մտածելու,
որ նա «զաշնադիր է ընդ Յոյնս և կամի սպրը-
դել յեկեղեցի զաղանդ նոցին»: Դժգոհութիւնն
հասաւ Աշոտ արքային, որը հրամայեց ժողով
գումարել և քննել յիշեալ գործերը: Վա-
հան Ա. խոյս տուեց և փախաւ Վասպուրա-
կան Ապուսահլ Համազասպ թագաւորի մօտ
և բնակեցաւ նոյն Չորոյ վանքում: Անույ
ժողովի մէջ կային շատ յայտնի վարդապետ-
ներ, որոնցից մէկն էր և Արշարունեաց եպիս-
կոպոսը՝ Խաչիկ, այն է Պետրոս Գիտադարձի
եղբայրը: Ժողովն աթոռից մերժեց տէր Վա-
հանին, և տեղը նոր կաթուղիկոս ընտրեց
Սեանայ վանական տէր Ստեփաննոսին: Նոր
կաթուղիկոսը բանադրեց Վահանին, իսկ վեր-
ջինս, օգնական ունենալով Ապուսահլ Արծրու-
նուն, բանադրեց Ստեփաննոսին. և այսպիսով
ինչպէս պատմիչներն են ասում «յերկոցունց
կողմանց նգովիւք լցին զաշխարհս Հայոց»: Միև-
նոյն ժամանակի մէջ երկու կաթուղիկոս, երկու
թագաւորութիւն և երկու խումբ եկեղեցա-
կանների հանդէս եկան, որոնք շատ նորանոր
չարիքների պատճառ պիտի լինէին, եթէ «վե-
րին ակնարկմամբն» երկու հայրապետներն էլ
մի տարուայ մէջ (ըստ Օրպ. մի օրուայ մէջ)
չմեռնէին և Խաչիկ Արշարունին կաթուղիկոս
չընտրուէր, որ իւր բարձր կոչումը լաւ հաս-
կանալով, ոչ միայն «միապետեալ խաղաղացոյց
զաշխարհս Հայոց», այլ մինչև անգամ ազդու-
կերպով պաշտպանեց Հայոց եկեղեցին Յունաց
հալածանքների և կրօնական անտեղի յարձա-
կումների՝ դէմ:

Քանի որ այս ամենը քաջ յայտնի էին
Պետրոս Ա. կաթուղիկոսին, անհասկանալի
է մնում մեզ համար այն թէ, ինչո՞ւ նա
ծածկաքար հեռացաւ դէպի Չորոյ վանքը,
որ Վահանի արարքներն յիշեցնելու լաւ
առարկայ էր իւր հակառակորդների աշ-
քում: Արդեօք կաթուղիկոսը լրջօրէն կշռե՞ր

1. Մատթ. Ուո. 86 / 90. Մատ. Ան. 407. Վարդան. 98.
Կիրակ. Գանձ. 51:

2. Մատ. Ան. մի քանի ձեռագիր օրինակների մէջ
նշանակուած է «չորս ամիս»:

էր իւր արածի հետեանքներն և ի նշ վախճան էր սպասում նոյնպէս չգիտենք միայն յիշուում է որ նորա հեռանալն «անչափելի տրամուլթիւն» պատճառեց Հայոց աշխարհին, որ Յովհաննէս արքայն և իշխանները, թերեւս բիւզանդական միջամտութիւնից կասկածելով, միջոցներ գործ դրին նորան իւր աթոռը վերադարձնելու, և որ կաթողիկոսի հետեանալու պատճառներից մէկն այն է եղել, որ թագաւորն և նախարարները նորան չէին լսում: Սակայն այս ամենը չի արդարանում բուն գործի հետեանքներով: ահա թէ ի նշալէս: Թագաւորն և նախարարները շենքութեամբ թուղթ» գրեցին տէր Պետրոսին և «հանդերձ մեծ երդմամբ» խոստացան «լինել ունկնդիր ամենայն հրամանաց նորա և ականջալուր աւմենայն լուսաւոր վարդապետութեան նորա»: նոքա միևնոյն ժամանակ դիմեցին Հոռոմոց իշխաններին, որոնք Վասպուրականի կողմնապահ վերակացուններն էին, և նոցա միջնորդ բնարեցին տէր Պետրոսին համոզելու. կաթողիկոսն այդ ամենին հաւատարմով վերադարձաւ դէպի իւր աթոռը: Այն ժամանակ երբ նա մտնելու էր Անի, Յովհաննէս թագաւորի հրամանով նորան կալանաւորեցին և բանտարկեցին Բջնի ամրոցում: բանտի մէջ կաթողիկոսը մնաց մի տարի և հինգ ամիս: ¹ Նորա կեանքի այդ ժամանակին է վերաբերում Գրիգոր Մագիստրոսի թղթերից մէկը, որ գրել է կաթողիկոսին, ուղարկելով նորան «Ծփրեմի Հաւատոց գիրքը, «զընկերդ քո ի քումն միայնութեան» «բղձալի քեզ քան զոսկի և քան զարծաթ»:

Տէր Պետրոսին բանտարկել տալուց յետոյ՝ Յովհաննէս Սմբատ մարդ ուղարկեց Սահահնի վանքն և բերել տուեց այնտեղի վահահօրը մեծն Դէոսկորոսին, որին և կաթողիկոս գրին նորա փոխարէն: Դէոսկորոս կաթողիկոսութիւն արաւ մի տարի և երկու ամիս, բայց «ոչ ըստ հրամանացն Աստուծոյ», ոչ ոք չէր ընդունում նորա ձեռնադրութիւնը: նորա անունը չյիշուեցաւ եկեղեցու մէջ, որովհետեւ նորան անարժան էին համարում

Հայրապետական պատուին: նորա ձեռնադրութեան ժամանակ մինչև իսկ չժողովուեցան եպիսկոպոսները, քահանաներն և վանքերի առաջնորդները: ինքը Դէոսկորոս անարժանութեամբ վարեց իւր պաշտօնը, չատ անարժանների եպիսկոպոս ձեռնադրեց, նոցա որոնք նախորդ Հայրապետներից բանադրուած էին իրենց յանցանքների համար, բոլորին յառաջ քաշեց. այսպիսով նա միանգամայն ընկաւ ժողովրդի աչքից. «կարի յոյժ խաբեալ եղև մեծ հռետորն Դէոսկորոս և կորոյս զանչափ պատիւն զոր ունէր» ասում է պատմիչը: ¹ Հայոց երկրի եպիսկոպոսներն և վարդապետները, նախարարներին և թագաւորին ծանաչելով այս չարիքների նախապատճառ, նզովեցին նոցա և բանադրանք կարգացին այն հակառակութեան համար, որ նոքա յառաջ բերին եկեղեցումէջ: Այսպիսի նզովքից սարսափելով, թագաւորն և իշխանները կամեցան վերադարձնել տէր Պետրոսին իւր աթոռը, բայց նա յանձն չառաւ և, չնայելով որ նորանից թողութիւն էին խնդրում նա դարձեալ չհամաձայնեցաւ: Գործին վերջ տալու համար թագաւորն և իշխաններն ստիպուեցան թուղթ գրել Աղուանից ծերունի Յովսէփ կաթողիկոսին և խընդրել, որ զայ բարեխօս լինի տէր Պետրոսի առաջ և նորանից իրենց համար ներումն առնելով, կրկին դարձնէ նորան իւր աթոռը: Տէր Յովսէփ Աղուանից եպիսկոպոսների հետ միասին եկաւ Անի, այնտեղ 1039 թուին մեծ ժողով եղաւ. ներկայ էին եպիսկոպոսներ, վանական առաջնորդներ, կրօնաւորներ, վարդապետներ, իշխաններ, ընդամենը չորս հազար մարդ: Ժողովին նախագահում էր ծերունի Յովսէփ կաթողիկոսը: Ծղելութիւնը պարզելուց յետոյ ժողովը մեղաւոր ծանաչեց Դէոսկորոսին, գրկեց նորան հայրապետական պատուից, նորա գլխի վերայ պատառելով հայրապետական քօղը, որ հին ժամանակ կաթողիկոսները սովորութիւն ունէին կրելու: ² Միևնոյն ժամանակ՝ ժողովը բանադրեց Դէոսկորոսի ձեռնադրածներին և արգելեց, որ ոչ ոք նոցա քահանայութիւնը չվերադարձնէ:

1. Վարդան. 98. Զամբո. 15. (Նշանակուած է ԺԶ. ամիս):

1. Մատ. Ուոհ. 88:

2. Պիր. զանծ. 51:

ապա ժողովը հայրապետական աթոռի վերայ հաստատեց տէր Պետրոսին որով խաղաղութիւնը վերականգնեցաւ եկեղեցու մէջ՝ իսկ Դեոսկորոս ամօթահար վերադարձաւ իւր վանքը Սանահին, ուր երկար ժամանակ առաջնորդութիւն արաւ կրեւով և հայրապետ անունը։¹

Ե.

Թէպէտեւ տէր Պետրոս Ա. վերստին ստանձնեց 1040 թուին Հայոց հայրապետութիւնը, սակայն նորան վիճակուած չէր խաղաղութեան հովիւ լինելու։ 1041 թուին Եովհաննէս Սմբատի և նորա եղբոր Աշոտի մահով խռովութիւնների մի նոր շրջան սկսուեցաւ։ Անգլաւակ արքայի ժառանգութեան վեճերին մասնակից եղաւ տէր Պետրոս, որ և ինքն էր եղել սկզբնական միջնորդը վիճողների մէջ։

Առաջինը Բիւզանդիոյ կայսրներն էին, որ իրենց ժառանգ էին համարում Անուոյ թագաւորութեան, ապացոյց առնելով այն թուղթը, որ Եովհաննէս Սմբատի կողմից 1022 թուին տուել էր Վասիլ Բ. կայսերն Հայոց կաթողիկոսը։ Դնչպէս պատմում են, Վասիլ կայսեր եղբայրն և յաջորդը Կոստանդին Ը. 1028 թուին իւր մահուան ժամանակ կանչել տուեց իւր մօտ Կիրակոս քահանային, որ երբեմն Հայոց կաթողիկոսարանի «հիւրատեան» էր եղել, և նորան յանձնեց Եովհաննէս արքայի թուղթը, պատուիրելով հասցնել Հայոց թագաւորին։² Սակայն Կիրակոս իրեն յանձնուած աւանդն իւր օգտին գործ դրեց, և մի ժամանակ յետոյ վաճառեց Միքայէլ կայսերը։ Թէև Եովհաննէսի մահից յետոյ Միքայէլին չյաջորդուեցաւ տիրել Հայոց թագաւորութեանը, սակայն յիշեալ չարարատիկ թուղթը մնաց իբրեւ փաստ, որով բիւզանդական արքունիքը իրաւունք էր համարում պահանջել, որ Անին իւր տիրապետութեանն յանձնուի։ Հայոց նախարարների մէջ այդ խընդրի պատճառով աղմուկը զօրացաւ։ Մի կող-

մը հաւան էր մայրաքաղաքն յանձնելու, միւս կողմը հակառակ։ Անժառանգ մնացած զահին տիրել ուզեց նոցանից մէկը՝ Վեստ Սարգիս, որ Եովհաննէս արքայի մահուան ժամանակ Հայոց արքունի տան հոգաբարձուն էր. նա բոլոր թագաւորական գանձերն իրեն մօտ առաւ և ուզեց թագաւորել Շիրակայ և նորա շուրջը գտնուող գաւառների վերայ. նորան հակառակ զինուեցան Պահլաւունի իշխանները, որոնց պարագլուխն էր Վահրամ ծերունին։ Ծոբա միաբանեցան տէր Պետրոս Ա. կաթողիկոսի հետ և Եովհաննէսի եղբոր Աշոտի որդուն տասն և ութնամեայ Գագիկին անմիջապէս թագաւոր ընտրեցին այն նպատակով, որ զահի ժառանգութեան խնդիրը փակուի և բաժանուածները միաբանին։ Գագիկը քաջ սրտի տէր, իմաստուն և լաւ կրթուած երիտասարդ էր. կաթողիկոսն հանդիսաւոր կերպով օծեց նորան թագաւոր։ Ծրբ յայտնի եղաւ, որ մայրաքաղաքն և տէրութիւնն ունի իւր օրինաւոր տէրն և ժառանգը, այն ժամանակ Վեստ Սարգիս, որ Հայոց արքունի գանձերով փակուել էր Անուոյ միջնաբերդում, ահամայ կամօք խոնարհեցաւ նորապսակ արքայի առաջ և անձնատուր եղաւ։ Գագիկ Բ. նուաճեց բոլորին և երկու տարի խաղաղ կառավարեց։ Սակայն 1044 թուին Կոստանդին Թ. Մոնոմախ կայսրը, կամենալով Անին գրաւել, Վեստ Սարգիս խորհրդով հրաւիրեց Գագիկ Բ. արքային Կ. Պօլիս։ Թէպէտեւ թագաւորն զգում էր վտանգն և չէր ուզում գնալ, բայց նախարարները, որոնց մէջ և Վեստ Սարգիս, սկսեցին համոզել նորան, որ գնայ. միևնոյն ժամանակ տէր Պետրոս Ա. կաթողիկոսին էլ միջնորդ ընտրեցին, երդումն արին և ուխտեցին հաւատարիմ մնալու թագաւորին և պահպանելու Անին և տէրութիւնը մինչև արքայի վերադարձը։ Աւանդում են, որ այդ երդման գիրն աւելի ապահով և անփոփոխելի ճանաչելու համար նոքա չխղձահարուեցան մինչև անգամ «գրիչը Կենարարի արևան մէջ թաթախելու» և այնպէս վաւերացնելու իրենց ուխտը։² Այն ժամանակ Գագիկ Բ. Անուոյ

1. Հալ. Ս. եպ. Ճանապ. Ա. 28. 52;

2. Արքիստ. Լաստիվ. 56;

1. Արքիստ. Լաստիվ. 57;

2. Մատթ. Ուռհ. 110. Սմբ. սպար. 45;

բանալիներն յանձնեց տէր Պետրոս Ա. կաթողիկոսին, նմանապէս և բոլոր երկրի հոգացողութիւնն ու խնամքը նորան հաւատաց, ու ինքը ձանապարհ ընկաւ դէպի Կ. Պօլիս իբրեւ զձուկն ի կարթէ ըմբռնեալ կամ իբրեւ զհաւ ի ծուղակաց: 1 Երբ դժբաղդ արքայն հեռացաւ իւր հայրենիքից, դաւաճանութեան խորհուրդն անմիջապէս յայտնի եղաւ: Առաջինը դրժեց իւր ուխտին նոստանդին թ. կայսրը, որ խոստացել և երդուել էր բարեկամութեան դաշն դնել և Անույ թագաւորութիւնը Գազիկի վերայ հաստատել: Յա արգելեց Հայոց թագաւորին և ստիպմամբ պահանջեց նորանից հրաժարուելու Անույ ժառանգութեան իրաւունքից: Քաջասիրտն Գազիկ Բ., որ դաւով նենգութեամբ ընկել էր բիւզանդական ծուղակի մէջ, երկար դիմադրեց և պաշտպանեց իւր իրաւունքները: Երբ այս տխուր համբաւն հասաւ Անի, այնտեղ ևս դաւաճանութեան ոգին զօրացաւ այն անձինքների մէջ, որոնք սարսափելի երգմամբ ուխտել էին հաւատարիմ մնալ արքային: Իշխաններն երկպառակեցան. ոմանք ուղեցին Անին յանձնել Դաւիթ Դուռնացուն, որի քոյրը Գազիկ Բ. թագաւորի կինն էր. 2 ոմանք ուղեցին Ափսաղաց թագաւորին, Բագրատին տալ Անին. Պահլաւունեաց իշխանը Գրիգոր թէեւ անձամբ բարեկամ չէր Գազիկին, այլ կամենալով ազատել Հայոց դահլ, ածապարեց դէպի Բիւզանդիայ, բայց անկարող եղաւ ազդելու: Թերեւս նորան խորհրդակից էր և տէր Պետրոս Ա., որի ազդեցութեամբն և յանձն առած է երեւում Գրիգոր այդ երկար և քաղաքականապէս վտանգաւոր ձանապարհորդութիւնը: Իւր անկարողութիւնն այդ խնդրի մէջ Գրիգոր պատկերացնում է մի առակով, որ պատմել է իւր մէկ թղթի մէջ՝ ուղղած առ Հայոց հայրապետը. Արտուտը վախենալով, որ չլինի թէ երկինքը փուլ գայ, պատմում է նա, փորի վերայ է ընկնում, և ոտքը վեր է տնկում, աշխատում է դէմ տալ երկնքին. նորա վերայ ծիծաղելով ասում են ոմանք թէ, «որով ծղէծնդօք ծառանաս, ծը-

տիկ քոյ ծովդ խելօք», արտուտը պատասխանում է. Ինչքան կարող եմ, այնքան եմ անում: Այս առակով Գրիգոր Մագիստրոս հասկացնել է ուղում կաթողիկոսին, որ ինչ կարող էր, այն արաւ. բայց անգոր լինելով վտանգը փարատելու և տեսնելով, որ Գազիկ Բ. այլ ևս արձակուելու չէ, ինքն էլ իւր բերդի Բջնի ամրոցի բանալին և այլ հայրենի կալուածները կայսեր յանձնեց, և փոխարէնն ընդունեց մագիստրոսութեան պատիւ, զիւղեր, քաղաքներ և այլ կալուածներ Միջագետքում, ուր և հաստատեց իւր բնակութիւնը: Եւ այս էլ, նա, ինչպէս երեւում է, ակամայ արաւ, որովհետեւ իւր թղթի մէջ գրում է տէր Պետրոսին թէ, «հաւատալով իբրու անտուստ խոստմանց, յարեայ ածապարեալ, քաջագօտի գտեալ, ի սեփականն հասուցի հայրենի, զոր ի բազմաց վաճառեալ և ծախեալ, և այժմ հալածական լեալ փախչիմք»: Գրիգոր Մագիստրոսի այսպիսի անյաջող և տխուր դեսպանութիւնից յետոյ՝ տէր Պետրոս Ա. որ ժամանակի պարագլուխների մէջ իբրեւ կաթողիկոս ընդհանուր ազգի միակ ներկայացուցիչն էր և Գազիկ Բ. արքայի առաջ Անույ ապահովութեան մասին երաշխաւոր էր կանգնել, իրերի վիճակը տեսնելով, բանակցում է բիւզանդական կուսակալի հետ, որ նստում էր Սամոսատում, և սակարկութիւն է անում Անույ մասին. «Ժանն թագաւորին, գրում է նորան տէր Պետրոս 2, թէ մեզ զինչ հատուցանէ, փոխարէնս, և ես տաց զքաղաքս և զայլ ամուրս, որ յաշխարհիս են»: Բանակցութեան վախճանն այն եղաւ, որ «զանձիւք և իշխանութեամբ» յօժարեցուցին կաթողիկոսին և առան նորա հաւանութիւնն Անին յանձնելու: Դաւաճաններն՝ առանց ամենեկին հարցնելու Գազիկ Բ. արքայի հաճութիւնը՝ Անույ քառասուն բանալիներն ուղարկեցին նոստանդին թ. կայսեր և հրաւիրեցին նորան

1. Այս են Մագիստրոսի խօսքերը. «ի գոնճիկս պատմի առակեալ արտուտի զգուշութիւն երկնի յստորս կործանիլ. եւ նա անկեալ պարտ յորսայս զոտն ի վերայ յերկն ջանայ կարկառել, զի մն՝ երկն յերկիւր անկցի իսփուցեալ ի պարսաւ առեալ ոմանց, թէ որով ծղէծնդօք ծառանաս, ծովդ խելօք. պատասխանեալ հաւսասց. Որքան կարեմ, զայն առնեմ»:

2. Արքիստ. Լաստ. 42:

գալու և տիրելու Բագրատունեաց մայրաքաղաքին և երկրին: Գագիկ Բ. տեսնելով որ Անույ բանալիներն արդեն իւր խորամանկ ախոյեանի ձեռքն են, ակամայ յօժարանում է ընդունել կայսրից այլ քաղաքների փոքր Ասիայում, թէև նոցա արժէքն «յոյժ պակաս էր ըստ արժէիցն Անույ և այլ աշխարհին»:

Զ.

Բիւզանդական արքունիքը՝ որքան որ անարդար կերպով զրկեց զժրաղջ Գագիկ Բ. արքային, այնքան էլ առատութեամբ վարձատրեց տէր Պետրոս Ա. կաթողիկոսին: զշնորհակալիսն եւ զտրից տուրան, ասում է ժամանակակից պատմիչը՝¹ կաթողիկոսին հատուցին, յորմէ զքաղաքն առին»:² Թէ ի՞նչ է տէր Պետրոսի ստացած տրիտուրը կամ վարձատրութիւնը, այդ չեն յիշում պատմիչները: յիշում են սակայն, թէ նա ինչպէս շուտ պատժուեցաւ և իրեն խաբուած տեսաւ: Երբ որ Հայոց զօրքն իմացաւ թէ թագաւորն այլ ևս արեւելք դառնալու չէ, ասում պատմիչը, զային առհասարակ ամենայն տունն Հայոց, և արարին ամենայն քաղաքն ժողով, ուր էին գերեզմանք թագաւորացն Հայոց, լային և զաթոռ թագաւորութեանն իւրեանց, և կոծ եղեալ առհասարակ լային զթագաւորն իւրեանց Գագիկ, և անէծս ցաւագինս կարողային նենգաւորացն Գագիկայ: Միջ նենգաւորների մէջ առաջինը տէր Պետրոս կաթողիկոսն եղաւ, որ իւր վերայ զգաց ժողովրդական լացի և անէծքների ծանրութիւնը, այն պատիւն ու մեծարանքը, որ նա տեսաւ բիւզանդական կուսակալներից առաջին տարիներում, շուտով տեղի տուին անարգանքի և անպատուութեան: Հէնց առաջին կուսակալներից մէկը կամենաս «ոչ ըստ առաջին պատուոյն մեծարէ զհայրապետն, և սկսանի զրով ամբաստան լինել զնմանէ առ թագաւորն եւ խաքանօք հանէ զնա ի քաղաքէն»:³ Անույ մատնութիւնից յետոյ շատ չքաշեց, որ տէր Պետրոս ստիպուեցաւ հեռանալ զժրախտ մայրաքաղաքից, կայսեր կողմից նորան յայտնեցին, որ

հրամայուած է բնակութեան տեղ հաստատել Կարնոյ գաւառի Արծն աւանը: Եւ այն հայրապետը, որ երբեմն իր ձեռքն ունէր Անույ քառասուն բանալիները, հարկադրուեցաւ ակամայ տարագիր շրջել այս ու այն կողմ բիւզանդական կուսակալների հրամանի տակ: Որքան դառն պիտի լինէր հայրապետի համար զգալ իւր սխալն և հառաչել՝ շատ կարճ ժամանակ իւր սնոտի փառքը վայելելուց յետոյ: Թերեւս այդ տարածամ գիտակցութեան և զգացմունքի յայտարարն է այն աւանդութիւնը, որ պատմում են՝ թէ տէր Պետրոս մասածելով որ «գուցէ այլ ոչ թողուն զիս Հռոմք երանել յարեւելք», շտապում է իւր քեռորդուն Խաչիկին ձեռնադրել կաթողիկոս, և միևնոյն ժամանակ ինչպէս ասում են, երկաթէ ամաններով, մօտ չորս հարիւր լիտր մեռած թագցնել Ախուրեան գետի մէջ Անույ դրան մօտ, որ չլինի թէ Հռոմեաների ձեռքն ընկնի: Արծն աւանումն էլ նա երկար չկարողացաւ մնալ. 1051 թուին յունուարի 6-ին ճաշի ժամանակ կաշնաւորեցին հայրապետին և տարան Խաղտոյ Առիճ բերդն, ուր և արգելեցին նորան: Ականատես պատմիչն Արիստակէս Հաստիվերտցի պատմում է, որ նոյն օրն, երբ տէր Պետրոս Ա. կատարում էր Զրօրհնէքի հանդէսը, մեռանի շիշը կտարուեցաւ և նորա ձեռքը սաստիկ վիրաւորեց, շատերն, այդ տեսնելով, դուշակիցին թէ զի բարւոյ ինչ նշան, և այդ իսկապէս կաթողիկոսի ձերբակալութեան շարագուշակ նշանն էր: Թէ ինչո՞ւ բիւզանդական դուռը պէտք համարեց վարելու տէր Պետրոսին, որին այնքան պարտական էր, Անի քաղաքից Արծն, Արծնից Խաղտոյ Առիճ, դարձեալ յայտնի չէ, սակայն պիտե՛ք, որ այստեղ էլ նա երկար չմնաց. զատկական տօնի օրերը հանեցին նորան Խաղտոյ Առիճից և տարան Կ. Պօլիս: Կաթողիկոսի ուղեորութիւնն իւր վերջին արգելանից մինչև Բիւզանդիա շքեղ էր և իւր գիրքին համեմատ: Երեք հարիւր փառեալ թիկնապահ, հարիւր քսան վարդապետ, եպիսկոպոս, կրօնաւոր և երաժիշտ մարդիկ ջորինների վերայ նստած և երկու հարիւր հեռեակ

1. Արիստ. Հաստ. 42:

2. Մատթ. Ուոհ. 115:

3. Արիստ. Հաստ. 43:

պաշտօնեաներ, ուղեկցում էին հայրապետին մինչև Կ. Պօլսո: Ուղեկիցների մէջ կային շատ խմաստասէր և զիտուն վարդապետներ, որոնց անունները մի առմի թուել է պատմիչը: ¹ Բիւղանդական մայրաքաղաքը զղրդեցաւ Հայոց հայրապետին ընդունելու ժամանակ. «տարան զնա ի Սուրբն Սոփի և անդ հանդիպեալ թագաւորին և պատրիարքին, և իջուցին զնա ի փառաւոր տանն, և հրամայեաց թագաւորն տալ ծախս տէր Պետրոսի»: Երկրորդ օրը կաթողիկոսը զնաց թագաւորի պալատն և այնտեղ ընդունուեցաւ մեծ շքով ու բազմեցաւ ոսկի գահաւորակի վերայ (սայլիտ, սելին), իսկ երբ մեկնեցաւ պալատից, նորա եպիսկոպոսներից մէկը տէր Ծղիսէ առաւ արքունական ոսկի գահաւորակն իւր հետ տանելու. սպասաւորներն ուղեցին արգելել. նա պատասխանեց, որ «հայրապետական աթոռ է, և ոչ ոք է արժանի ի սմա նստիլ, բայց միայն տէր Պետրոս»: ² Կայսրը իրաւացի համարեց տէր Ծղիսէի պատասխանն և ասաց «Թոյլ տուք զառաքելական աթոռդ ի զմա»: Այսքան եղաւ թերեւ տէր Պետրոսի ուղեւորութեան արդիւնքը Բիւզանդիայում, որ գէթ հայրապետական աթոռը կայսեր հրամանով կանգուն մնաց, թէպէտ ոչ ըստ առաջնութիւն ազատ: Զորս տարի ³ մնաց տէր Պետրոս Կ. Պօլսում և շարունակ նոյն պատիւն ու մեծարանքն էր վայելում. երբ պալատ էր գրնում, առջևից տանում էին հայրապետական զաւաղանք. երբ թագաւորը տեսնում էր նորան «երկիր պազանէր և հրաման տայր մեծամեծաց իւրոց ելանել ընդդէմ տէր Պետրոսի»: Զորս տարուց յետոյ թագաւորն և պատրիարքը տուին տէր Պետրոսին շատ ընծաներ, և «ազգի ազգի զարգարանս» և «իշխանութիւնս տայր ազատաց»: ⁴ Այս ամենից երևում է, որ Հայոց կաթողիկոսը, թէև կալանաւոր էր Բիւզանդացւոց մօտ,

բայց ոչ անարգուած. նա մի պատուաւոր զերէր էր, որ երկար ժամանակ արգելուեցաւ Կ. Պօլսում այն պատճառով, որ Կոստանդին Մոնոմախ «կասկածէր թողուլ ի Հայս, թէ երթեալ ապստամբեցուցանէ զԱնի»: Թէ ինքը տէր Պետրոս Ա. որ 3-4 տարի արտաքին շքով ու պատուով մնաց Բիւզանդիայում, ինչ խորհուրդներ ունէր և ինչ գործ կատարեց այնտեղ, լռում են պատմիչները: Յայտնի է միայն, որ նորա վերայ մեծ կասկածանքով էին նայում Բիւզանդական արքունիքում. այնպէս որ Վասպուրականի վերջին թագաւորի Սենեքերիմի որդին Ատոմ Արծրունի երաշխաւոր է լինում տէր Պետրոսի մասին («առեալ զնա յերաշխիս») և իւր հետ տանում է Սերաստիա: Այնտեղ Ատոմ բնակութեան տեղ տուեց կաթողիկոսին և Եշանի վանքը: Երկու տարի ապրեցաւ Սերաստիայում տէր Պետրոս Ա. և 1059 թուին վախճանուելով, ամփոփուեցաւ նոյն տեղում: ¹ Իրրեւ մի պանդուխտ, տարադրեալ հովիւ, որ իւր կեանքի վերջին օրերը կարողացաւ հանգիստ անց կացնել միմիայն մի այնպիսի հայ իշխանի երաշխաւորութեան շնորհիւ, որի համար նոյնպէս նոր էր Սերաստիայի բնակավայրը:

Է.

Անւոյ մատնութիւնից տասն և չորս տարի յետոյ կնքեց տէր Պետրոս իւր մահկանացուն: Այդ ժամանակամիջոցում Հայոց երկիրն ալեկոծեալ ծովի նման ծփում էր խռովութեան և տագնապների մէջ. դեռ 1045 թու.

1. Պատմիչները որոշ յայտնում են, որ տէր Պետրոս թաղուեցաւ Սերաստիայում. սակայն նորա շիրմը ցոյց են տալիս եւ Վարազայ վանքում, հետեւեալ տառապանքով (Հ. Ն. Սարգս. Տեղագր. 256). «Թ. Ին ԴԾԱԱ Այս է հանգիստ տեառն Պետրոսի կաթողիկոսին, որ ի Տրապիզոն զգետն Ծորոն արգելաց առաջի վասիլ արքային»: Այս տառապանքի թուականն անճիշտ է, 471 ոչ թէ նորա մահուան տարին է, այլ յայտնի չորօրէնքի, այն է 1022 թուականը: Թէ իսկապէս տեղի ունեցած է տէր Պետրոսի Նշխարների փոխադրութիւնը դէպք Վարագ եւ իր ժամանակ, մենք չգիտենք. հաւաստին այն է, որ Սերաստիայի շիրմն է նորա վերջին քաղաքանքը, եւ ոչ մի ժամանակ յարմարութիւն եւ առիթ չէր կարող լինել փոխադրութեան մասին մտածելու: Վարազայ տառապանքաբղ լոկ մի յուշարար է, որ տէր Պետրոս արգելել է Ծորոն գետը 471—1022 թուին, եւ այդ յուշարարը պէտք էր այն ս. Նշանի համար, որն ըստ աւանդութեան պահուում է Վարազայ վանքում:

1. Մատթ. Ուռն. 125:

2. Ըստ Սմբատ Սպար. եր. 31 «Աթոռ հայրապետական է, չէ պարտ նստիլ ի վերայ այլ մարդ»:

3. Ըստ Ար. Լաստ. «ամ երիս» Ըստ Սմբ. Սպար. «ամիսս չորս», եր. 31:

4. Արեստ. Լաստ. 60. Մատթ. Ուռն. 122. Սմբատ Սպար. 31:

ին, երբ բիւզանդական զօրքերը նոր էին եկել Անին առնելու, թուրքերը Վասպուրականի վրայով հասան մինչև Բասեն, և հրով, սրով և գերութեամբ քանդեցին, ապականեցին քսան և չորս գաւառ:¹ Այնուհետև միջանի անգամ արշաւեցին երկրի վերայ մի կողմից յունական բանակները և միւս կողմից թուրք կիսավայրերի հրոսակները: Զրիստոնէութեան և հեթանոսութեան, կամ քաղաքակրթութեան և վայրենութեան ազնիւ պայքար չէր նոցա ընդհարումը, այլ անպաշտպան մնացած, ամեն կողմից անակնունելի վտանգներով պաշարուած, իւր առաջնորդների շնորհիւ բաժան բաժան եղած մի ժողովրդի անխնայ սպառումն էր այդ: Թուսահատութիւնն այնպէս էր պատել ամենքին, որ ժամանակակից ողբերգակ Հաստիվերտցին յաճախ բացազանչում է այն օրերի համար. «վայ և աււղ դառն լուսոյ աւուրն»: Այն շէն ու ծաղկեալ քաղաքները, որոնք պարծանք էին երկրին, հետզհետէ ամայանում էին: Բնակիչները, որ իրենց բարեկեցութեամբն ամենի ընդհանուր նստիսն էին շարժում, «չարագանեալք և կործանեալք և տեսարան աշխարհի եղեալք», ոչնչանում էին. «աշխարհ ամենայն ի խաղաութեան բնակէ, հառաչում էր այն ժամանակ նոյն պատմիչը, և մեք գերիք և կալանաւորք և սրակոտորք և տնաւորք և լընչից կողուպտածք»: այդպիսի ծանր թշուառութեան ժամանակ՝ անցած դնացած երջանիկ օրերի քաղցր յիշատակը բնականաբար կրկնում էր բոլորի սուգն իւր խօսքերի մէջ ամփոփող նոյն պատմիչի բացազանչութեամբ. «Ո՛ր թաքաւորացն աթոռք, ո՛ր զօրացն բազմութիւն, ո՛ր հայրապետական աթոռն մեծ եւ հրաշալիւն»: ² Սակայն զուր էր այդ որոնել. կարծ ժամանակի մէջ արդէն քանդուել ապականուել էր երկար դարերի շինածն ու հաստատածը՝ բազմամարդ քաղաքներն ու աւանները դատարկացել, եկեղեցիներն անշքացել և վանքերն հողի հաւասար եղել: Անկշռելի կորուստների առաջն առնելու այլ ևս հնար չէր մնացել այն պատճառով, որ

ինքը ժողովուրդը բազմութեամբ տեղից եւնումս գաղթում էր հայրենիքից դուրս դէպի օտար, անծանօթ երկիրներ, տեսնելով, որ իւր իշխաններն անմիաբան էին հոգեւոր առաջնորդներն և կրօնաւորներն անգործ, և թշնամին չափազանց յանդուգն և անպատկառ:

Այս ամեն աղէտներին ականատես և ականջալուր եղաւ տէր Պետրոս մերթ Անոյ բազմամարդ հայրապետանոցից, մերթ Արծնի և յաղտոյառծի արգելարանից և մերթ «յօտար աշխարհ հեռացեալ իրրե զգերի և զկալանաւոր» Վոսփորի ափերում արքայական չքով ոսկի բարձերի վերայ հիւրասիրուելու ժամանակ: Անշուշտ, բոլոր այդ դառն վայրկեաններում նա զգաց իւր աշխարհաւեր սխալի մեծութիւնը, զգաց և ժորմօքաց այնպիսի մի ժամանակ, երբ այլ ևս կարող չէր իւր ժողովրդի վշտացած սիրտն սփոփելու: Այդ տարածամ զղջումը, ապագաների համար միայն խրատական այդ ներքին ապաշաւանքն է, անշուշտ, արտայայտուած և նորա շարականների մէջ:

— Թէ երբ կարողացաւ նա յօրինել իւր այդ շարականներն, իսկապէս չգիտեմք, սակայն հաւանական է, որ նա գրական պարապմունքների նուիրուած լինի առհասարակ 1045 թուից յետոյ և իւր տարագրութեան տարիներում: Այդ մենք տեսնում ենք նախ Գրիգոր Մագիստրոսի ու նորա միջև տեղի ունեցած նամակագրութիւնից, որից սակայն չի երևում թէ նա շարականներ է յօրինել և երկրորդ այն յիշատակարանից, որ նա գրել է, ս. Եովհանն ոսկեբերանի ճառերի առթիւ: Այդ յիշատակարանը,¹ որ գրուած է 1048 թուին, թէև հակիրճ, բայց նշանաւոր ապացոյց է, որ տէր Պետրոս իւր կեանքի վերջին տարիներում աշխարհիս փառքին և մեծութեանն այլ ևս այն նշանակութիւնը չէր տալիս, ինչոր յառաջ: Նա մեծ փափագով ձեռք է բերում ս. Ռսկեբերանի ճառերն իրրե «ստացուած ոչ առ ժամանակեայ», «նա խոստովանում է, որ առ ժամանակեայ ստացուածն «օտար է բնութեանս մերոյ», և այդ գործն է, որ իրեն յիշատակը պիտի պահէ, «արձան

1. Արիստ. Հաստ. 44:

2. Արիստ. Հաստ. 48, 50, 73 եւն:

անմահ կանգնեցի ասում է, յիշատակ հոգւոյ խմոյ»։ «զայլովք զամենեւումք զանց արարի»։ Նորան արդէն պարզ երեւում է այն, որ ամեն բան կորստական է և եղծանելի։ «զամենայն վայելչականս անպատուեւ ի ստորինս կալ մնալ»։ ուստի և ինչ որ ունէի երբեմն, տուի ասում է, և «զբազմապատիւ զմարդարիան փոխանակ ամենեցուն փոխանակեցի, և եղէ մեծաշահ վաճառական, և զուարճանամ այսօրիւք առաւել քան որովք բազմօք բերկրին»։

Անւոյ մատնութիւնից գրեթէ երկու տարի յետոյ այսպիսի խոստովանութիւն արձանագրելով, տէր Պետրոս Ա. նոյն յիշատակարանի մէջ ոգեւորութեամբ յիշում է ծիծեռնակի օրինակը, որ դարուն է բերում, բայց նա չի զուարճանում աշխարհային բնութեան պարզեւած դարնան վայելչութիւններով, նորան հաճելի է «հոգւոյ ակամբ տեսանել զգարունն հոգւոյ, յորժամ սառնասառոյց բնութիւնս այս սկսանի ընծիւղիլ ի ծագմանէ արեգականն արդարութեան»։ որպէս զի ջնեւալ ոգւով և զուարճացեալ ճառագայթիւք բանին, դարձեալ լինիցիմք ջուր խաղացեալ ի կեանսն յաւիտենից, և արժանատրապէս ի ժամու զպտուղն տունեալ, սաղարթալից բնականացուք ի տան Տեառն»։ Գետազարձ կաթուղիկոսի այսպիսի վսեմ փափազը պտուղ է իսկապէս նորա դառն փորձերի և տարածամեալ գիտակցութեան, երբ ինքն աւելի պակաս հնար ունէր ոգւով տաքանալու և ուրիշներին տաքացնելու խօսքի ճառագայթներով և իւր հօտը պատրաստելու իբրեւ «ջուր խաղացեալ ի կեանսն յաւիտենից»։ բայց նա իւր այս անաքանեալ զգացմունքն և խոստովանութիւնը գեղեցիկ կերպով դրոշմեց և արձանացուց ապագաների համար ոչ այնքան յիշեալ պերճախօս յիշատակարանով, որքան իւր ոգելից շարականներով։

Երեք խումբ են նորա յօրինած հոգեւոր երգերը՝ Մարտիրոսաց, Յնջեցելոց և Մանկունք կոչուած շարականներ, սակայն հաւաստի կերպով ընդունել, որ այդ երեք խմբի շարականները բոլորն էլ Գետազարձ հայրապետն է յօրինել, կարելի չէ նախ

այն պատճառով, որ նոյն խմբերի մէջ են Սարգիս Սեանեցու երգած «Սարսափելի որոտմամբ և ահազին զօրութեամբ»¹ և Յակոբ Սանահնեցու «Յանսկզբնական ծոցոյ Հօր խոնարհեալ Բանդ»² շարականները և երկրորդ, որ նորան ընծայած երգերը բոլորը միանման բարբառ չունին և իրենց ոճի կողմից տեղիք են տալիս զանազան հեղինակներ ենթադրելու։ Չնայելով այս ամենին, եթէ նորան յատուկ շարականներից ծաղկաքաղ անելու լինինք, կը տեսնենք, որ տէր Պետրոսի յօրինած հոգեւոր երգերի մէջ երեւում է նուրբ ճաշակ, վսեմ գաղափար և նորա իրեն հոգեկան վիճակի բնական արտայայտութիւն։

Գետազարձ հայրապետը, որ ունէր տոհմական ձոխութիւն, հինգ հարիւր գիւղ և առատ գանձեր, որ իբրեւ հոգեւոր տէր ոչ միայն հինգ հարիւր գաւառատեսուչ եպիսկոպոսներ ունէր ձեռքի տակ, այլ և մի ամբողջ երկրի կապողն ու արձակողն էր, կամ ըստ Գրիգոր Մագիստրոսի իբրեւ «սուրբ հայրապետ՝ մեր ծայրութեան» «որոշող էր, օգեաց ու այծեաց, բացող մեզ դրանն արքայութեան»։ Անւոյ մատնութիւնից յետոյ, երբ մի անգամից կորստեան մատնեց աշխարհային ամեն բան, ինչ որ ունէր, և նոյն իսկ իւր հոգեւոր իրաւասութեան առաւելութիւնները, իրաւունք ունէր, երկար և երկար մտածելով աշխարհիս ունայնութեան վերայ և իւր փառքերի սնոտի լինելը պատկերացնելով, Դմաստունի նման բացազանչել «Ունայնութիւն ունայնութեանց» կամ Արտաշէսի նման աղաղակել «Աւաղ փառացս անցաւորի»։ Սակայն նա նոցա այդ միտքը իւր ձեռով իւր աստիճանին և կոչմանն համեմատ ամփոփել է այնպիսի մի հոգեւոր երգի մէջ, որ ամեն ժամանակ և անգաղար հնչում է եկեղեցում ի խրատ ամենի։ «Ոսկի եղեալս անպիտանացայ, գեղեցկայարմար շինուածոյս քակտումն, իմաստունս յիմարեցայ ի յալեաց մեղաց, յոր ընկղմեցայ, և այժմ աղաչեմ զՍտեղծողդ ամենից, ընկալ և հանգո՛ զհրաժարեալ հոգիս յեօթնաստեղեան լուսեղէն խորանս, ուր ժո-

1. Եարական 663.

2. նոյն 672.

դովքն են սրբոց ի խաղաղութեան հոգեով հեղութեան յերկնից բարութիւնսն: Հեռաւոր պանդխտութեան մէջ կարօտ իւր հայրենական հաճելի յիշատակներին: Բնական է, որ տէր Պետրոս Ա. բացագանչէր և կրկնէր միշտ. «Պակասեցա՛յ յազգաստոյմէ՛, չքեալ թողի զկեանս՝ աշխարհի: և մօրմին ունայնութեան դարձաւ ի հող ուստի ստեղծաւ:» ուստի և ազօթում է առ Աստուած. «յիս մարգարիւնա՛յ, բազմագութ Փրկի՛չ, և փարատեցօ՛ զցաւս անձին իմոյ: Տասն և չորս տարի շարունակ խղճահարութեան մէջ, զղջման և ապաշաւանաց կրքերով յուզուած նորա սիրտը բաբախում էր միմիայն մահուան ակնկալութեամբ: որի սարսափները նորան պաշարել էին. նա տեսնում է իւր ոչնչութիւնը Աստուծոյ ահաւոր մեծութեան դատաստանի առաջ, երբ Ատեանն դնի և դպրութիւնք հրաշիցն բանին և դատաւորն ահեղ յակնարկելն իւր յարաբաժս հատուցանէ վարձս ըստ գործոց իւրաքանչիւրոցն:» Դատողի արդարութեան և զթութեան պատկերը միանգամից նորա աչքի առաջ են գալիս:» Կոչողն եհաս վերին Կոչողին, կոչնատէրն ահեղ, կոչողն ահաւոր, դատաւորն անաչառ, դատաստանն արդար, հրեշտակք անողորմ՝ դատեն զմեղաւորս:» Եւ ինչպէս ամեն մահկանացուն՝ նա էլ, որ հոգեւոր իշխանութեամբ լայնատարած երկրի վերայ բազմաթիւ գաւառների և բիւրաւոր ժողովրդի հրամայողն ու առաջնորդն էր, այդ պերճափայլ, արքայանման հայրապետը, յիշում է, որ Աստուծոյ հրամանով ի հող պիտի դառնայ և՛ ինքը, ուստի յոյսը դնում է յաւիտենական բժշկի վերայ, որ իւր ցաւերը փարատէ. «Մերձեցայ ես ի դուռն գերեզմանին, երգում է տէր Պետրոս, և եհաս ինձ ժամանակ մտանել ի յարգանդ երկրի, յորմէ ստեղծեալ եմք ամենեքեան. բժիշկ իմաստուն և ճարտարապետ, բժշկեա՛ զհոգեոյ զիմ՝ զհիւանդութիւն, արարող և յոյս փրկութեան մերոյ:» Իսկ մի ուրիշ տեղ ողբելով արդար դատաւորին, որ միշտ զթած է, աղաղակում է նոյն քրիստոնէական յուսով. «Զլուսաւորեալքս ծննդեամբ սուրբ աւազանին մի՛ բարկութեամբ խրատեր և մի՛ սրտմտութեամբդ քով յանգիմաներ, ի յոր ժամ հրաշալի ձայ-

նիւ փողոյն յառնեն մեռեալքն և կան առաջի ահաւոր քո բեմին:» Տէր Պետրոս՝ իւր սխալը խոստովանող և ճշմարտապէս զղջացող իմաստուն քրիստոնէաներից մէկն է երեւում այս երգերի մէջ. մի տեղ անոխակալ և բարեգութ Տիրոջ ողորմութիւնն հայցելով, նա երգում է. «Ծախաստեղծին այցող Փրկի՛չ, փրկեա՛ զմեզ յարժանահաս նեղաց մերոց:» Ինքն իրեն անարժան է համարում և երկրին ու եկեղեցուն հասած փորձութեան համար սրբերի բարեխօսութիւնն է դնում միջնորդ Աստուծոյ առաջ. «Եկա՛յք հաւատացեալք, յորդորում է նա, կատարեսցո՛ւք զյիշատակ սրբոց վկայից, զի ի ձեռն սոցա քացցի մեզ դուռն ողորմութեան:» Սոցա ազօթիւք, Փրկի՛չ, ինչպե՛ս ի սուրբ եկեղեցի քո՛ զոր ստացար պատուական արեամբդ քո՛ սրբոյ, երգում է գետադարձ հայրապետն և հաւաստի անում մեզ, որ սրբերն իբրեւ բարեխօս «հայցեն միաբան զխաղաղութիւն ամենայն աշխարհի:» որին այնքան կարօտ էին Անոյ մատնութիւնից յետոյ ս. եկեղեցու ժողովուրդը:

Տէր Պետրոսի շարականներից այս հակիրճ հատուածներն յառաջ բերելով, կարող ենք ընդհանրապէս գաղափար ունենալ թէ ի՞նչպիսի հոգի, ի՞նչպիսի սիրտ և միտք էր բնակում նորա մէջ: Մենք կասէինք, որ այդ մարդու սխալանքները, որ այնքան եղբրական արդիւնքներ ունեցան, մասամբ հետեանք էին ժամանակի վատթարագեցութեան, և չէին կարող յառաջանալ միմիայն նորա իրեն հոգեկան յատկութիւններից: Եկեղեցական պատմութեան այդ հետաքրքիր շրջանը գեռ շատ կարօտ է լուսաբանութեան, որպէս զի կարելի լինի լաւ հասկանալ թէ ինչո՞ւ այն ժամանակ, երբ Արշակունեաց զահր վերացաւ և Հայոց բազմը անցաւ մոգութեան աշակերտող Պարսից արքունիքի ձեռքը, կարելի եղաւ կարճ ժամանակի մէջ տասն անգամ աւելի զօրեղ մի հոգեւոր բանակ կանգնել թշնամու առաջ և փրկել մի քրիստոնէայ երկիր և ժողովուրդ հեթանոս տէրութեան շատ վտանգաւոր հարուածներից, իսկ երբ մեծափարթամ դարերի հոյակապ դահերն՝ Արծրունեաց, Բագրատունեաց, Վանանդու և այլոց, խոնարհեցան թուրք հրոսակների և բիւզանդական խարդաւանանք-

ների առաջ, այնքան դիւրութեամբ և այնքան անարժան կերպով անշքացաւ եկեղեցին, դատարկացաւ երկիրն, և Հայոց «մեծ և հրաշալի աթոռը» որ դուռն էր երկրի բոլոր իշխանութիւններին, գրեթէ անդառնալի տարադրուեցաւ: Իւր հետ տանելով արեւելեան քրիստոնեաների բաղդը և երջանկութիւնը, Երբ այս լուսարանութիւնը մի օր կատարելապէս տեղի ունենայ, այն ժամանակ թերեւ յայտնուի, որ տէր Պետրոս Ա. ակամայ զոհ էր ժամանակի համատարած և անբռնարարելի չարութեան: Իսկ մինչև այդ՝ աչքի առաջ ունենալով այն զղջումն և ապաշաւանքը, որ միշտ և յաւիտեան լսելի են նորա երգերի մէջ, հաւատում ենք, որ նորա յանցանքը կրնորուի նորան: Թախտեան արդար և ողորմած մեր Փրկիչը, որ մի խօսքով, մի ճշմարիտ խոստովանութեամբ, բաց արաւ աւազակի առաջ իւր դրախտի դռները, հաւատում ենք, որ չպիտի խտանայ Սեբաստիոյ շիրմից դարեր շարունակ «յիս մարդասիրեան բազմազութ Փրկիչ» անլուռ աղաղակողին:

Կ. Կ.



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՐԴԻՆԱԿԱՆ ԶՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՄԻՋՆԱԳԱՐԵԱՆ ԳՊՐՈՑՈՒՄ՝*

Հատ հետի չէ մեզանից դպրոցական կեանքի այն շրջանը, երբ կարգապահութեան գլխաւոր և միակ միջոցն էր ծեծը, ֆալախան, թէ՛ հասարակութեան և թէ՛ գրականութեան մէջ դրա յիշատակը շատ թարմ է, բայց արեւմուտքի համար արդէն անցեալին է պատկանում այդ:

Միջին դարերում դպրոցական կարգապահութեան և դաստիարակութեան նշանաբանը ֆալախան է. ապրել և մեծանալ ծեծի տակ հոմանիշ է արդի «Արք»:

* Քաղաւած է «Нравъ», շաբաթաթերթից, տես. Արարատ ղեկոնմանք 1895:

Թ ու թ իւ շ ս տ ա ն ա լ ՝ խօսքին: Ծեծից կապտած թիկունք, արտասուքից թաց այտեր, ապտակի տակ կծկուած մկաններ միջին դարու աշակերտի բնորոշ գծերն են:

Հուսարական օրէնքով եթէ ուսուցիչը ձեռքով կամ գաւազանով ծեծում է աշակերտին, բայց բանը արեան չի հասնում, ոչինչ. իսկ երբ աշակերտը ծեծի տակ արիւնլուայ է լինում կամ մեռնում է, ուսուցիչը պատասխանատու է: «Երբ մեր ուսուցիչը գինով էր լինում կամ զայրացած, պատմում է Նազգմ Ալբերտը, քնաթաթախ ցած էր գլորում ինձ անկողից և ոտներիցս բռնած երեսիս վերայ քարշ էր տալիս: Քանի՜ քանի շնորհալի պատանիներ, որ ապագայի մեծամեծ յղյսեր էին տալիս, իմ աչքի առաջ կամ մոռնում էին կամ խեղագարում:» 2-րդ տասնամյակների վերայ պատկել, նուազ և վատ սնունդ, օւժից վեր աշխատանք, ամբողջ գիշերներով անքնութիւն շատ տաղանդաւոր պատանիների՝ հէնց դպրոց մտնելու առաջին տարին, իջեցրել են գերեզման կամ զրկել աչքի լուսից, խեղքից:

Անբրեւակայելի յիշողութիւն, երկաթի առողջութիւն և անսովոր զօրեղ նեարդային համակարգութիւն՝ անհրաժեշտ պայմաններ էին միջին դարում գիտութիւն ձեռք բերելու համար. բայց դպրոցը ոչ թէ կրթում զարգացնում էր յիշեալ կողմերը, այլ անխնայ ճնշում: հաղարից մէկը հազիւ յաղթող էր դուրս գալիս այդ կատաղի կռուի մէջ: Ըստ երեւութին դպրոցական այդ խիստ կարգապահութեան շնորհիւ է, որ միջին դարի գիտնականները և փիլիսոփաները զարգացրել են իրենց մէջ երկաթի կամք և հզօր բնաւորութիւն: Բայց այդ հսկայական պատկերները ծածկում են մեր աչքից այն հաղարաւոր անմեղ զոհերին, որոնք ընկել են գաւազանի հարուածների տակ: Միջին դարի դպրոցը բնական ընտրութեան սկզբունքով է առաջնորդուել. ոչ թէ ինքը աշխատել է յարմարուել աշակերտի անհատական յատկութիւններին, այլ անխնայ դէն է նետել կամ փշրել, ինչ որ նորա չափին չէ եկել. այս ճանապարհով ընթացել է նա Զ. դարից մինչև ԺԷ և մասամբ ԺԸ դարը:

Բայց այս բոլորը միջնադարեան դպրոցի ծանրութեան միայն մի կողմն է. Ժամանակի գիտութեան ձգտող պատանին գեռ շաւո ու շաւո անցարմարութիւնների պիտի յաղթէր, որոնցից իւրաքանչիւրը յուսահատութեան մէջ կարող էր ձգել արդի ուսանողին:

Վեանքի պայմանները վերին աստիճանի անյաջող էին և պատանին գիտնական աստիճան ստանալու տեղ յաճախ կարող էր կախաղանի արժանի լինել, կամ քաղցածութիւնից մեռնել, կամ զանազան հիւանդութեամբ փութել և լին և լին: Այն կանոնաւոր երթևեկութիւն կար, ոչ այլ յարաբերութիւն, ոչ